

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. — Մբ. 1701ին:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. — Պարոնտէր պարք.ի ժամանակ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Աթոռս:

ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. — Մբ. Վարազայ վանքին. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբը, և կը վախճանի 1858ին Յոպպէի մէջ:

ՄԿՐՏՈՒՄ, ՈՐԴԻ ՄԵԼՔՈՒՄԻ, ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, որդի Դաւրի, Եւայրն. ի յիշատակ իրենց ննջեցելոց Ս. Յակոբին կը նուիրեն ոսկեայ ազաւնի մը: (Յուլ. Պ.):

ՄՆԱՅՍԱԿԱՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ, ԶԷՅԹՈՒՆՅԻ. — Ծ. 1840ին. աշկ. տեղւոյն Ազգ. Վարժ.ին, ուսուցիչ Զէյթունի մէջ. Մարաշի կառավարիչ Ազիզ փաշայի կռիւներուն առթիւ 1862 Օգոստ. 2ին Զէյթունցի Յակոբ քհն. հետ պատգամաւոր կը զրկուի Պոլիս. 1864ին Զմլւոնիա կ'այցելէ և կը մնայ տեղւոյն հիւանդանոցը. ապա կը դառնայ Զէյթուն և կը շարունակէ իր պաշտօնը:

1895ին Չաքրեան Աւագի հետ իբր պատգամաւոր Ատանա կ'ուղևորի Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան համար. քաղաքական դէպքերու հետեանքով Քիլիսի մէջ եօթն ամիս կը բանտարկուի. բանտէն ազատուելէ յետոյ կը ճամբորդէ Կիպրոս, Ադրիանոփոլիս. 1899 Մարտին կը մեկնի Էյլիսափիմ ուր կը հասնի Զատիկին Ապրիլ 18ին, կը մնայ 18 օր և կ'այցելէ վանքերը և Ունեցի Կարապետ կթղ.ին գերեզմանը. կ'այցելէ Սրիմեան Հայրիկ կթղ.ի որ Սէմէրճեանին կուտայ 6000 բուբլի Զէյթունի մէջ որբանոց մը բանալու համար. յաջորդաբար կ'այցելէ Երևան, Հատիճի վանք, Կիւմրի, Սնի, Տփիսիս, Պարոտ, Մոսկուս, Վարշաւա, Վիեննա, Ժընևի, ուր կը մնայ չորս տարի և երեք ամիս. 1902ին Ժընէվէն Փարիզ կ'այցելէ Յուլյանհանգէսի առթիւ և վերստին կը դառնայ Ժընէվ՝ ուրկէ կը մեկնի 1903 Նոյ. 23ին և Մարտէյի ճամբով կուգայ Ադեքսանդրիա: 1908ին Սահմանադրութեան տարին Ադեքսանդրիայէն կը մեկնի հայրենիք. ուրկէ դարձեալ կը մեկնի 1911ին Քիօսքիմնէ, յետոյ Պուրիշ՝ ուր կ'այցելէ իր հայրենակից Չաքրեանի (1844—1899) գերեզմանին. 1912ին չորրորդ անգամ ըլլալով կ'այցելէ Զմլւոնիա. 1912ին եօթանասուն և երկու տարեկանին կը թեւակոխէ. երկու անգամ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը՝ առաջինը 1895ին,